

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Նկարում պատկերված է.



- 1) ռելիեֆի կտրվածք (պրոֆիլ)
- 2) հորիզոնական
- 3) համադրման սանդղակ
- 4) լեռնագիծ

2 Հյուսիսարևմտյան կողմի ազիմուտը հավասար է.

- 1) 135°
- 2) 45°
- 3) 315°
- 4) 180°

3 Երկու կետերի հեռավորությունը գլոբուսի վրա 3,7 սմ է, իսկ իրականում՝ 1850 կմ: Ի՞նչ մասշտաբ ունի գլոբուսը.

- 1) 1 : 500 000
- 2) 1 : 5 000 000
- 3) 1 : 50 000 000
- 4) 1 : 50 000

4 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Երկիրն Արեգակի շուրջը պտտվում է շրջանաձև ուղեծրով:
- 2) Մարտի 21-ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հարավային արևադարձի վրա:
- 3) Յուրաքանչյուր ժամային գոտուց արևելք ընկած գոտին 1 ժամով առաջ է նախորդից:
- 4) Արեգակի ճառագայթները նույն լայնության վրա տարվա ընթացքում միշտ նույն անկյան տակ են ընկնում:

(77-78) Երկրի բնակչության թիվը 2 մլն է, բնական աճի գործակիցը՝ 20‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 12 400 մարդ, արտագաղթը՝ 8 520 մարդ.

77 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

78 Որոշել բնակչության մեխանիկական աճը:

(79-80) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 720 մմ է, գագաթին՝ 520 մմ: Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 18° է (հաշվարկը կատարել 5°-ով).

79 Որոշել Լեռան հարաբերական բարձրությունը:

80 Որոշել օդի ջերմաստիճանը Լեռան գագաթին:

75 Քարտեզում ՀՀ կլիմայի ո՞ր տիպն է նշված Ա տառով.



- 1) ձյունամերձ (խիստ ցուրտ) լեռնային
- 2) բարեխառն լեռնային
- 3) չոր խիստ ցամաքային
- 4) ցուրտ լեռնային

76 Երկրում բրնձի համախառն բերքը կազմում է 690 000 գ, իսկ զբաղեցրած ցանքատարածությունների մակերեսը՝ 30 000 հա: Որքա՞ն կլիմի միջին բերքատվությունը:

5 Երկրի խորքում բարձր ջերմաստիճանից ապարները վերածվում են գազերով ու ջրային գոլորշիներով հագեցած հրահեղուկ զանգվածի, որը կոչվում է.

- 1) լավա
- 2) մղանցք
- 3) խառնարան
- 4) մագմա

6 Տվյալ վայրին բնորոշ միանման եղանակների բազմամյա կրկնությունը կոչվում է.

- 1) կլիմա
- 2) օդային զանգված
- 3) ամպամածություն
- 4) մթնոլորտային ճնշում


7 Լավային հոսքից կամ լեռնալանջի փլվածքից գետի հունը փակվելու հետևանքով առաջացած լիճը կոչվում է.

- 1) խառնարանային
- 2) հնահունային
- 3) մնացորդային
- 4) արգելափակման

8 Ի՞նչ բարձրության վրա օդի ջերմաստիճանը հավասար կլինի + 11°-ի, եթե նույն պահին Արագածի գագաթին – 4° է (յուրաքանչյուր 1000 մ-ին ջերմաստիճանի փոփոխությունն ընդունել 5°).


- 1) 1900 մ
- 2) 1009 մ
- 3) 1000 մ
- 4) 1090 մ

9 Նկարում հարթավայրի ո՞ր տեսակն է պատկերված Ա տառով.



- 1) դաշտավայր
- 2) բարձրավայր
- 3) սարահարթ
- 4) ցածրավայր

10 «Քամիների վարդում» հորիզոնի ո՞ր կողմից է ամենից շատ փչել քամին.



- 1) հյուսիսարևմտյան
- 2) հարավարևելյան
- 3) հարավարևմտյան
- 4) հյուսիսարևելյան

11 «Մայրցամաք — թերակղզի» գույգերից ընտրել սխալը.

- 1) Եվրասիա — Ալյասկա
- 2) Հյուսիսային Ամերիկա — Ֆլորիդա
- 3) Ավստրալիա — Քեյփ Յորք
- 4) Աֆրիկա — Սոմալի

12 Ճնապողգուլային հողերը բնորոշ են.

- 1) բարեխառն գոտու լայնատերև անտառների տարածման շրջաններին
- 2) մերձարևադարձային գոտու սավաննաների և նոսր անտառների տարածման շրջաններին
- 3) հասարակածային խոնավ մշտադալար անտառների տարածման շրջաններին
- 4) բարեխառն գոտու խառն անտառների տարածման շրջաններին

71 Բնական գազի հանույթով առաջատար երկրներ են.

- 1) Ֆրանսիան և Գերմանիան
- 2) Եգիպտոսը և Թուրքիան
- 3) Լեհաստանը և Չեխիան
- 4) Նիդերլանդները և Իրանը

72 Հողերի էրոզիայի պատճառ կարող են լինել.

- 1) աղակալած հողերի լվացումը
- 2) ագրոանտառաբարելավումը
- 3) քարամաքրումը
- 4) արոտավայրերի գերարածեցումը

73 Մթնոլորտի աղտոտման մարդածին աղբյուրներ են.

- 1) արդյունաբերությունը
- 2) փոշեհողմերը
- 3) հրաբխի ժայթքումը
- 4) սպարների քայքայումը

74 Քարտեզում ո՞ր տառով են նշված բնակչության առավել բարձր բնական աճ ունեցող երկրները.



- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա

- 66 **ՀՀ կլիմայի վերաբերյալ n^o ր պնդումն է ճիշտ.**
- 1) Տարվա տաք կեսին տիրապետում են Իրանական բարձրավանդակից թափանցող արևադարձային օդային զանգվածները:
 - 2) Տարվա ընթացքում առավելագույն տեղումները լինում են նոյեմբեր դեկտեմբեր ամիսներին:
 - 3) Տարվա ընթացքում ամենաշատ ամպամած օրերը լինում են Գեղարքունիքի մարզում (Մարտունի):
 - 4) Հանրապետության տարածքը արևադարձային կլիմայական գոտում է:

- 67 **ՀՀ բնակչության վերաբերյալ n^o ր պնդումն է սխալ.**
- 1) Բնակչության խտության ցուցանիշն ամենաբարձրն է մինչև 1000 մ բարձրության գոտում:
 - 2) Ամենաբարձրադիր բնակավայրը Տավուշի մարզում է:
 - 3) Բնակչության խտությունը մեծ է Արմավիրի մարզում:
 - 4) Ազգային կազմով գրեթե միատարր երկիր է (մոտ 98 %-ը հայեր):

- 68 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ n^o ր պնդումն է ճիշտ.**
- 1) ՀՀ էլեկտրակայանների հզորության կառուցվածքում առավել մեծ բաժին ունեն ջեկերը:
 - 2) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Արմավիր և Գյումրի քաղաքները:
 - 3) Ալյումինի արդյունաբերության կենտրոնը Վանաձորն է:
 - 4) ՀՀ մեքենաշինության տեղաբաշխումը ամբողջությամբ համընկնում է գունավոր մետաղաձուլության տեղաբաշխման հետ:

- 69 **Ի՞նչն ընդհանուր չէ Տավուշի և Վայոց ձորի մարզերի համար.**
- 1) Բնակչության մեծ մասն ապրում է գյուղերում:
 - 2) Մասնագիտացած են հանքային ջրերի արտադրության մեջ:
 - 3) Հարուստ են անտառային ռեսուրսներով:
 - 4) Գերիշխում են ծալքաբեկորավոր լեռնաշղթաներն ու միջլեռնային գոգավորությունները:

- 70 **Հրազդան և Արարատ քաղաքների օդային ավազանի աղտոտման պատճառներից է.**
- 1) շինանյութերի արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումները
 - 2) քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների արտանետումները
 - 3) գունավոր մետաղաձուլական ձեռնարկությունների արտանետումները
 - 4) մեքենաշինական ձեռնարկությունների առկայությունը

- 13 **Այս սառը օվկիանոսային հոսանքը ձգվում է Աֆրիկայի հյուսիսարևմտյան ափերի երկայնքով և ունի հյուսիսից հարավ ուղղություն: Այն ողողում է համանուն կղզեխմբի ափերը: Ո՞ր հոսանքն է.**
- 1) Լաբրադորյան
 - 2) Սոմալիի
 - 3) Կանարյան
 - 4) Ասեդի հրվանդանի

- 14 **Ո՞ր պնդումն է սխալ.**
- 1) Միջերկրական ծովը ողողում է երեք աշխարհամասերի ափեր:
 - 2) Ջիբրալթարի նեղուցը միացնում է երկու օվկիանոսների ջրեր:
 - 3) Սուեզի պարանոցը միացնում է երկու մայրցամաք:
 - 4) Կարմիր ծովը ողողում է երկու աշխարհամասերի ափեր:


- 15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**
- 1) Լեռնահովտային քամիներն ակտիվանում են հատկապես տարվա ցուրտ կեսին:
 - 2) Պասսատը տարվա ընթացքում իր ուղղությունը երկու անգամ փոխող քամին է:
 - 3) Արևմտյան քամին արևադարձային լայնություններից դեպի բարեխառն լայնություններ փչող քամին է:
 - 4) Մուսսոնը օրվա ընթացքում իր ուղղությունը երկու անգամ փոխող քամին է:

- 16 **«Հարթավայր — աշխարհամաս» գույգերից ընտրել ճիշտը.**
- 1) Պադանի դաշտավայր — Ավստրալիա և Օվկիանիա
 - 2) Մերձատլանտյան դաշտավայր — Ամերիկա
 - 3) Գվիանական սարահարթ — Աֆրիկա
 - 4) Մեծ հարթավայրեր — Ասիա

- 17 **«Գետ — վտակ» գույգերից ընտրել ճիշտը.**
- 1) Միսիսիպի — Մուրբ Լավրենտիոս
 - 2) Նիգեր — Շարի
 - 3) Ամազոն — Մարանիոն
 - 4) Վոլգա — Դնեստր

- 18 **Լավրասիայի մասնատումից առաջացած պլատֆորմ է.**
- 1) Հնդկականը
 - 2) Աֆրիկա-Արաբականը
 - 3) Հարավամերիկյանը
 - 4) Չինականը

19 Քարտեզում Դ տառով ո՞ր գետն է նշված.



- 1) Օրինկո
- 2) Ամազոն
- 3) Պարագվայ
- 4) Պարանա

20 Քարտեզում Ը տառով ո՞ր պետությունն է նշված.

- 1) Կոլումբիա
- 2) Ուրուգվայ
- 3) Պերու
- 4) Բոլիվիա

21 Այն երևույթը, երբ բնակչության մահացությունը գերազանցում է ծնելիությանը, առկա է բնակչության նեղ վերարտադրություն և բնակչության թվի նվազում, կոչվում է.

- 1) ժողովրդագրական պայթյուն
- 2) ժողովրդագրական ճգնաժամ
- 3) ժողովրդագրական արտահոսք
- 4) ժողովրդագրական իրավիճակ

62 Թուրքիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնակչության թվով երկրորդ ազգը պարսիկներն են:
- 2) Բնակչության թվով ամենամեծ քաղաքը Անկարան է:
- 3) Առավել խիտ են բնակեցված երկրի արևելյան շրջանները:
- 4) Բնակչության գերակշիռ մասը դավանում է մահմեդականության սուննի ուղղությունը:

63 Բնութագրումով որոշել պետությունը.

Այս պետությունն աշխարհի առաջատարներից է նավթի արդյունահանմամբ և արտահանմամբ: Բնակչության մեծամասնությունը դավանում է մահմեդականության շիա ուղղությունը: Երկրի ներքին շրջանները բնութագրվում են չոր մերձարևադարձային ու արևադարձային կլիմայով: Աշխարհի առաջատարներից է ոչխարների և այծերի գլխաքանակով: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Իրաքը
- 2) Սաուդյան Արաբիան
- 3) Իրանը
- 4) Թուրքիան

64 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հայկական լեռնաշխարհում տեղումների առավելագույն քանակը թափվում է Արևելապոնտական լեռների հյուսիսասիայաց լանջերին՝ 2000–3000 մմ:
- 2) Միջնաշխարհում տեղումների միջին տարեկան քանակը 400–500 մմ է:
- 3) Միջլեռնային գոգավորություններում ամռանը հաստատվում է ջերմաստիճանային շրջադասություն:
- 4) Բարեխառն օդային զանգվածները Հայկական լեռնաշխարհ են թափանցում արևմուտքից:

65 Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Զբաղեցնում է մոտ 29 հազ. քառ. կմ մակերես:
- 2) Ալպ–Հիմալայան գեոսինկլինալային գոտում է:
- 3) Հարավում տարածվում է Կուր–արաքսյան դաշտավայրը:
- 4) Հարավ–արևելքում սահմանակցում է Փոքրասիական (Անատոլիական) բարձրավանդակին:

56 Հյուսիսային Ամերիկայի մերձարևադարձային գոտու Խաղաղօվկիանոսային ասֆերի կլիման.

- 1) խոնավ մերձարևադարձային է
- 2) միջերկրածովային է
- 3) մուսսոնային է
- 4) չոր մերձարևադարձային է

57 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Կապի և Դրակոնյան լեռները հին, քայքայված լեռներ են:
- 2) Աֆրիկայի ամենախոնավ շրջանը Դրակոնյան լեռների հյուսիսարևելյան լանջերն են:
- 3) Աֆրիկայում ամենաբարձր ջերմաստիճանը (+58,1°) գրանցվել է հասարակածային գոտում:
- 4) Կիլիմանջարոն գործող հրաբուխ է:

58 Ո՞ր շարքի գետերն են հոսում հարավից հյուսիս ուղղությամբ.

- 1) Ինդոս, Եփրատ, Գանգես
- 2) Դանուբ, Կուր, Ամուր
- 3) Օբ, Ենիսեյ, Լենա
- 4) Դնեպր, Վոլգա, Մեկոնգ

59 Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներ են.

- 1) Կամերունը և Պակիստանը
- 2) Նիգերիան և Կոնգոն
- 3) Իտալիան և Ճապոնիան
- 4) Բանգլադեշը և Հնդկաստանը

60 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Իրանի բնակչության մեծ մասը դավանում են իսլամի շիա ուղղությունը:
- 2) Քրիստոնյաների մեծ մասը կաթոլիկներ են:
- 3) Հնդկաստանի բնակչության մեծ մասը դավանում է բուդդայականություն:
- 4) Հինդուիզմը և սինտոիզմը ազգային կրոններ են:

61 Ածուխ արդյունահանող առաջատար երկիր է.

- 1) Բանգլադեշը
- 2) Պակիստանը
- 3) Աֆղանստանը
- 4) Հնդկաստանը

22 Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական, մշակութային և ինքնության զգացողության ընդհանրությունը, երբ ազգը դառնում է ավելի միասնական ու ամրակուռ, կոչվում է.

- 1) ազգային համախմբում
- 2) միգրացիա
- 3) ազգերի միաձուլում
- 4) վերարտադրություն

23 Բնութագրումով որոշել երկիրը.

Այս երկիրը նախագահական հանրապետություն է: Այն ցամաքային կապող օղակ է Պիրենեյան թերակղզու և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների միջև: Հարուստ է ուրանի պաշարներով, որի շնորհիվ էլեկտրաէներգիայի զգալի մասը արտադրվում է աեկներում: Ո՞րն է այդ երկիրը:

- 1) Ֆրանսիան
- 2) Գերմանիան
- 3) Իսպանիան
- 4) ՌԴ-ն

24 Երկրում քաղաքաբնակների բացարձակ թիվը 10 մլն է, իսկ ամբողջ բնակչության թիվը՝ 25 մլն: Երկրի ուրբանիզացման մակարդակը կկազմի.

- 1) 40 %
- 2) 25 %
- 3) 10 %
- 4) 50 %

25 «Ժողովուրդ — կրոն» գույգերից ընտրել սխալը.

- 1) իտալացի — քրիստոնեություն
- 2) հրեա — բուդդայականություն
- 3) չինացի — դաոսականություն
- 4) թուրք — մահմեդականություն

26 «Պետություն — մայրաքաղաք» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Լիտվա — Վիլնյուս
- 2) Սերբիա — Զագրեբ
- 3) Թուրքիա — Ստամբուլ
- 4) Բուլղարիա — Բուդապեշտ

27 «Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) պլաստմասսա — մեքենաշինություն
- 2) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն
- 3) սինթետիկ մանրաթել — թեթև արդյունաբերություն
- 4) հաստոց — մետաղաձուլություն

28 Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
- 2) Անդրհիրանական գազամուղով երկիրը Եվրոպայից գազ է ներմուծում:
- 3) Երկրի հավատացյալ բնակչության 90 %-ը դավանում է մահմեդականության շիա ուղղությունը:
- 4) Աղքատ է վառելիքաէներգետիկ ռեսուրսներով:

29 Ժողովրդագրական պայթյունը բնորոշ է.

- 1) Ռուսաստանին և Ուկրաինային
- 2) Ֆրանսիային և Գերմանիային
- 3) ԱՄՆ-ին և Կանադային
- 4) Նիգերիային և Ռուանդային

30 Ունիտար պետություններ են.

- 1) Կանադան և Ֆրանսիան
- 2) Հայաստանը և Ճապոնիան
- 3) ԱՄՆ-ը և Ավստրալիան
- 4) Գերմանիան և ՌԴ-ն

31 «Պետություն — ջրաէլեկտրակայան» գույգերից ընտրել սխալը.

- 1) ՌԴ — Կրասնոյարսկ
- 2) Բրազիլիա — Իտայպու
- 3) Բելառուս — Բրատսկ
- 4) Չինաստան — Երեք կիրճեր

32 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Նոր զարգացող երկրների գյուղատնտեսությունը զարգանում է ինտենսիվ ուղիով:
- 2) Ցորենի ցանքատարածությունների տեղաբաշխումը համընկնում է բրնձի ցանքատարածություններին:
- 3) Աշխարհում հացահատիկային մշակաբույսերին բաժին է ընկնում ամբողջ մշակվող հողատարածքների ավելի քան կեսը:
- 4) Աշխարհում թելատու մշակաբույսերից ամենատարածվածը վուշն է:

Բ մակարդակ

51 Մեպտեմբերի 23-ին առավելագույն ջերմություն ստանում են.

- 1) հյուսիսային կիսագնդի բարեխառն լայնությունները
- 2) հարավային կիսագնդի արևադարձային լայնությունները
- 3) հյուսիսային կիսագնդի արևադարձային լայնությունները
- 4) հասարակածային լայնությունները

52 Երևան (արլ. ե. 44°30') և Իրկուտսկ (արլ. ե. 105°) քաղաքների գոտիական ժամանակների տարբերությունը կլինի.

- 1) 2 ժամ
- 2) 3 ժամ
- 3) 4 ժամ
- 4) 1 ժամ

53 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Կորիոլիսի ուժի հետևանքով Երկրի վրա հորիզոնական ուղղությամբ շարժվող օբյեկտները (գետեր, քամիներ և այլն) իրենց սկզբնական ուղղությունից հյուսիսային կիսագնդում շեղվում են դեպի աջ, հարավայինում՝ ձախ:
- 2) Երևանի գոտիական ժամանակն առաջ է Տոկիոյի գոտիական ժամանակից:
- 3) Օրվա նույն ժամը կարող է լինել միայն նույն գուգահեռականի վրա:
- 4) Հս. լ. 66°30' -ից հյուսիս և հվ. լ. 66°30' -ից հարավ բևեռային գիշերների ու ցերեկների տևողությունը կրճատվում է:

54 Ընտրել բնության բաղադրիչների միակ ճիշտ գուգորդումը.


- 1) մերձարկտիկական կլիմա — 200–300 մմ տեղումներ — տափաստան
- 2) բարեխառն մուսսոնային կլիմա — 600–800 մմ տեղումներ — սավաննա
- 3) արևադարձային կլիմա — 400–500 մմ տեղումներ — անապատներ
- 4) բարեխառն ծովային կլիմա — 800–1000 մմ տեղումներ — լայնատերև անտառ

55 Ո՞ր շարքի ջրային ավազաններն են պատկանում Հնդկական օվկիանոսին.

- 1) Բենգալական ծոց, Արաբական ծով, Դեղին ծով
- 2) Ադենի ծոց, Կարմիր ծով, Դեղին ծով
- 3) Հարավչինական ծով, Պարսից ծոց, Բենգալական ծոց
- 4) Կարմիր ծով, Պարսից ծոց, Բենգալական ծոց

49

Ո՞ր լեռնանցքն է քարտեզում նշված *Բ* տառով.



- 1) Սևանի
- 2) Ջաջուռի
- 3) Պուշկինի
- 4) Սելիմի

50

Ո՞ր էլեկտրակայանն է քարտեզում նշված *Ե* տառով.

- 1) Քանաքեռի
- 2) Վանաձորի
- 3) Արզնու
- 4) Մեծամորի

33

Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներ են.

- 1) Հնդկաստանը և Բանգլադեշը
- 2) Քենիան և Եթովպիան
- 3) Իրանը և Սիրիան
- 4) Ավստրիան և Հունգարիան

34

Պողպատի արտադրությամբ առաջատար երկրներ են.

- 1) Չինաստանը և Ճապոնիան
- 2) Հնդկաստանը և Պակիստանը
- 3) Կանադան և Բրազիլիան
- 4) Իտալիան և Իրանը

35

Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասի մեջ չի մտնում.

- 1) Սյունիքի բարձրավանդակը
- 2) Գեղամա լեռնավահանը
- 3) Արարատ լեռնազանգվածը
- 4) Կարսի սարահարթը

36

«Գետ — հոսքի ավազան» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Ճորոխ — Սև ծով
- 2) Եփրատ — Կասպից ծով
- 3) Արաքս — Պարսից ծոց
- 4) Տիգրիս — Կասպից ծով

37

ՀՀ-ում ամենաշատ տեղումները լինում են.

- 1) ցուրտ լեռնային կլիմայի տիպում
- 2) խիստ ցուրտ (ձյունամերձ) կլիմայի տիպում
- 3) չափավոր շոգ կլիմայի տիպում
- 4) բարեխառն լեռնային կլիմայի տիպում

38

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ՀՀ-ում կլիմայաստեղծ գործոններից են մուսսոնները:
- 2) ՀՀ-ում հստակ արտահայտված է հյուսիսից հարավ փոփոխվող լայնակի կլիմայական գոտիականությունը:
- 3) ՀՀ-ում միջլեռնային գոգավորությունների ցածրադիր մասերում ձմռանը դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):
- 4) ՀՀ-ում ամենաշատ տեղումները թափվում են Արփայի գոգավորությունում:

39

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՀ գինու-կոնյակի արտադրությունը հիմնականում տեղաբաշխված է արտադրանքի սպառման շրջաններում:
- 2) ՀՀ-ում պտղաբուծությանը զբաղվում են բոլոր շրջաններում՝ մինչև 2100 մ բարձրությունները:
- 3) ՀՀ ոչխարաբուծությունը հիմնականում տեղաբաշխված է նախալեռնային և լեռնային շրջաններում:
- 4) ՀՀ հողային ֆոնդի կառուցվածքում ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ բաժինը պայմանավորված է հիմնականում մակերևույթի լեռնային բնույթով:

40

ՀՀ տրանսպորտում բեռնաշրջանառությամբ առաջինն է.

- 1) ավտոմոբիլային տրանսպորտը
- 2) օդային տրանսպորտը
- 3) գետային տրանսպորտը
- 4) երկաթուղային տրանսպորտը

41

Ո՞ր լանդշաֆտն է գերակշռում Շիրակի մարզում.

- 1) անտառային
- 2) ալպյան և մերձալպյան
- 3) լեռնատափաստանային
- 4) կիսաանապատային

42

Կոտայքի մարզը արդյունաբերության ո՞ր արտադրությամբ հանրապետությունում առաջատար դեր չի խաղում.

- 1) ցեմենտի արտադրություն
- 2) էլեկտրաէներգետիկա
- 3) պահածոների արտադրություն
- 4) հանքային ջրերի արտադրություն

43

ՀՀ-ում ո՞ր բարձրություններում է բնակչության միջին խտությունը ամենաբարձրը.

- 1) 2000–2500 մ
- 2) մինչև 1000 մ
- 3) 1500–2000 մ
- 4) 1000–1500 մ

44

Քաղցրահամ ջրի պաշարներով հարուստ է.

- 1) Կանադան
- 2) Ուզբեկստանը
- 3) Իրանը
- 4) Սաուդյան Արաբիան

45

Մթնոլորտի աղտոտվածության հետևանք չէ.

- 1) սմոգը
- 2) ջերմոցային էֆեկտը
- 3) ջերմաստիճանային շրջադասությունը
- 4) թթվային անձրևը

46

Ո՞րն է մթնոլորտի մաքրության պահպանման միջոցառումներից.

- 1) ցեմենտի արտադրության ավելացումը
- 2) ջերմային էլեկտրակայանների թվի ավելացումը
- 3) կանաչ տարածքների ընդարձակումը
- 4) քիմիական ձեռնարկությունների թվի ավելացումը

47

Հողաբարելավման միջոցառում(ներ) չէ(չեն).

- 1) հակաէրոզիոն միջոցառումները
- 2) քիմիական մելիորացիան
- 3) թեք լանջերի երկայնակի հերկումը
- 4) քարամաքրումը

48

Բնության այն տարրերն ու երևույթները, որոնք անմիջապես չեն օգտագործվում և սպառվում արտադրության գործընթացի ընթացքում, բայց կարող են ազդեցություն ունենալ դրա վրա, կոչվում են.

- 1) արտադրողական ուժեր
- 2) բնական պայմաններ
- 3) աշխատանքի միջոցներ
- 4) բնական ռեսուրսներ